

The musical score is written for four voices (Soprano, Alto, Tenor, Bass) and piano accompaniment. It features complex rhythmic patterns and dynamic markings such as *ff* and *fff*. The lyrics are in Armenian and correspond to the text on the right page. The score is divided into several systems, each with four staves for the voices and one for the piano accompaniment.

Պատկեր 7գ

ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Սուսանա Յովհաննիսեան

«Էս֊դէս է աշտարակը բաւ - յառաջիկայ էլ է յաճարակ
 - ինչ էլ ապրի ըստ: Բաւ ըստ, ապա բաւոն զայն աշտարակ
 ուս առաջադրուաւ աւ առաջադրուաւ սոց յառաջադրուաւ
 սով աւ աշտարակն ու յոյժ յառաջադրուաւ, աւ աւ ըստ
 էլ աւառակ, որ էր ըստ յոյժի» (10, 139):

Յովհաննէս Թումանեանի գրական ժառանգութիւնը, նրա կեանքը, ազգային-հասարակական գործունէութիւնը իր բազմաշերտ ու բազմակողմանի գրեւորութեան հետ ազդեցական մի երեւոյթ է, եւ որեւէ հետազոտող երբեք չի ասելու, թէ ինքը աւարտուն, սպառիչ ու ամբողջական խօսք է ասել Թումանեանի մասին:

Թէեւ Թումանեանի խաղաղասիրական գործունէութեան մասին բազմիցս ասուել ու խօսուել է, սակայն բազմաթիւ մանրամասներ, որոնք նոր լոյս են սփռում Թումանեանի ազգային եւ հասարակական գործչի գործունէութեան վրայ, դեռեւս մնում են չլուսարանուած նրա ժամանակակիցների արխիւներում եւ յուշերում, մամուլում, «Դաշնակցական գործ» վերնագիրը կրող դատական գործի արխիւային նիւթերում:

Թումանեանը յեղափոխական գործիչ չի եղել երբեք եւ մշտապէս բարձր է կանգնած եղել կուսակցական միակողմանիութիւնից: Նա ինքը հայի ոգին էր եւ այդ վերնագրով յղուածում ձեւակերպում է իր «անկուսակցական» հաւատամբը. «Ամէն ազգի մէջ կան եւ միշտ կը լինեն ամէն տեսակի հասարակական ու քաղաքական կուսակցութիւններ ու հոսանքներ, բայց բոլորովին ուրիշ բան է ժողովրդի ամբողջութիւնը»¹: Այս տողերը Թումանեանը գրում էր 1910 թ., իսկ մինչ այդ նա համագործակցել էր տարբեր կուսակցութիւնների՝ մասնաւորապէս հնչակեանների, դաշնակցականների ու սոցիալ-դեմոկրատների հետ, անդամակցել, սակայն շատ կարճատեւ՝ միշտ կապուած հայանպաստ ազգային կարեւորութեան գործերի իրականացման հետ: Բանաստեղծի գրառումներում կարգում ենք. «Եւ թէ որեւէ սոցիալիստական խմբակցութեան էլ կապուած եմ եղել ու շատ կարճ միջոցով, կապուած եմ եղել ոչ թէ ծրագրային կապով, այլ լոկ ընկերական եւ կոնկրետ գործի շուրջը» (8, 451)²:

Այդ կոնկրետ գործերից մէկն էլ հայ-թաթարական ընդհարումներն էին 1905-1906 թթ. եւ հայերի ինքնապաշտպանութիւնը: Երիտասարդ տարիներից Թումանեանը անմասնակից չի եղել քաղաքական խմբումներին: 1880-ական թթ. յայտնի է նրա եւ Ալեքսանդր (Վարդան) Գոլոշեանի համագործակցութիւնը: Վերջինս գոհուեց 1889 թ. գարնանը Յովհաննէս Ազրիպասեանի հետ վան մեկնելու ճանապարհին³: Թումանեանը այդ պահին պէտք է լինէր նրանց հետ: 19-ամեայ բա

¹ Յովհաննէս Թումանեան, *Նրկերի լիակատար ժողովածոյ 10 հատորով*, հտ. 6, Նրեան, 1994, էջ 194: Այսուհետեւ հատորն ու էջը կը նշուեն տեքստում:

² Այս տողերը Թումանեանի սեւագիր մի պատուհանի վրայ է գրուած, որը մեզ էր տրամադրել բանաստեղծի կրտսեր դուստր Թամար Թումանեանը: Այն պահում է Թումանեանի թանգարանի (այսուհետեւ՝ ԹԹ) թիւ 1079 նոր ցիֆերի թիւ 52 թղթապանակում: Առաջին անգամ մեզ այն հրապարակեցինք «Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթում (1994, թիւ 33):

³ Լ.Ե. Հայ Տերտան, 1920, էջ 41-70:

ձակուում թիֆլիսի վրայ, միև կողմից տեղի էին ունենում բանուորական գործադուլներ: Մի կողմից Դաշնակցութեան հետ համատեղ թուամանեանը կազմակերպում է հայրենի Լոռու ինքնապաշտպանութիւնը, միև կողմից Հաղպատի գիւղացիներն են ապստամբում տեղի կալուածատէրերի դէմ: Այսպէս, 1906 թ. օգոստոսին Ալաւերդու պղնձահանքերի գործարանի՝ Բորջալուի բանուորական կոմիտէն կազմակերպել էր գործադուլ: Թուամանեանը շտապում է Բորջալուի շրջանի գաւառապետ Պետր Լէոնտեւին համոզելու, որ գործադուլի հետ «հայկական կոմիտէները» առնչութիւն չունեն եւ այդ ընթացքում զբաղուած էին անկարգութիւնների, թալանի ու աւազակութեան դէմ պայքարով՝ «դատական գործեր» յարուցելով:

Բնականաբար, իշխանութիւնները այդ խառնակ շրջանում չէին կարող եւ չէին ցանկանում տարբերութիւն տեսնել ազգային ինքնապաշտպանութեան եւ սոցիալական բողոքի արտայայտութիւնների միջեւ: Հետեւաբար, իր ժողովրդի ինքնապաշտպանութեան համար խաղաղութեան դրօշ պարզած բանաստեղծը նոյնպիսի «տեռորիստ» էր, ինչպիսին բանուորի եւ գիւղացու մէջ դասային ատելութիւն սերմանող յեղափոխականը: Եւ քանի որ ոստիկանութեան վաւերագրերում հայերի զինուած ինքնապաշտպանութիւնը հռչակուում է իբրեւ «տեռոր թուրքերի դէմ», հետեւաբար եւ թուամանեանի անունը պէտք է յայտնուէր «տեռորիստ յեղափոխականների» ցուցակում, քանի որ նա շրջում էր ոչ միայն սպիտակ դրօշով, այլ նաեւ՝ զէնքով:

Երրորդ անգամ քաղաքականապէս անյուսալի անձանց ցուցակում թուամանեանի անունը յայտնուում է 1905 թ. փետրուարի 1-ին: Բաքուի կոտորածը սկսուել էր թուամանեանի անունը հետապնդման ենթակայ անբարեյոյս անձանց ցուցակում

ներառելուց հինգ-վեց օր յետոյ միայն՝ 1905 թ. փետրուարի 6-ից 9-ը:

Սա նշանակում է, որ բանաստեղծի հետագայ հալածանքները եւ բանտարկութիւնները չեն կապուում միայն հայ-թուրքական ընդհարումների հետ: Վերջինիս ընթացքում թուամանեանի գործունէութիւնը բարեպատեհ առիթ էր այդ հետապնդումները ուժեղացնելու համար:

Անբարեյոյս անձանց ցուցակը, որը վերնագրուած էր «Краткий список лиц, состоящих в сфере наблюдения в г. Тифлисе с 1-го февраля по 2-е марта 1905 года», կազմուել էր մէկ ամսուայ ընթացքում, եւ այնտեղ հայ, ռուս, հրեայ, վրացի կուսակցական գործիչների եւ յեղափոխականների, պարզապէս մտաւորականների՝ Ս. Խանոյեանի, Ա. Ահարոնեանի, Յովսէփ Արդութեանի, Ա. Զափարիձէի, Հ. Տէր-Դաւթեանի, Միլսա Յիսակայայի եւ ուրիշների անունների կողքին յայտնուել էր թուամանեանի ազգանունը: Ընդհանուր առմամբ, ցուցակում կար 61 անուն, որոնցից իւրաքանչիւրի դիմաց գրուած էր նրա կուսակցական պատկանելութիւնը, սոցիալական ծագումը, յեղափոխական կեղծանունը: Թուամանեանի ազգանունը 39-երորդն էր, եւ նրա դիմաց գրուած էր. «Туманян Ованес Татевосов, крестьянин (Жокей) - Дашнак»⁸:

Թուամանեանին հետեւող գործակալը նոյնպէս ունէր իր կեղծանունը՝ Շմակով: Այդ անունը յիշատակուում եւ կրկնուում է 1905 թ. սեպտեմբերից ոստիկանական բաժնի գաղտնի գրութիւններում⁹: Իսկ փետրուարին սրուած ոստիկանական լրտեսների զեկուցագրերի համաձայն՝ թուամանեանը 1905 թ. փետրուարի 15-ի երեկոյեան 8-ն անց 40 բողոքներ մտել էր

8 ԹԹ, ՓԲ, 45-47, 55: Տե՛ս նաեւ Լուսիկ Կարապետեան, Յովհաննէս Թումանեանի հասարակական գործունէութիւնը, Նրեւան, 1992, էջ 21:
9 Նոյն տեղում:

Թիֆլիսի Գոլովինսկի պողոտայի թիւ 15 տունը, որտեղ իբր ելումուտ էին անում սոցիալ-դեմոկրատները¹⁰:

Անգէն աչքով անգամ Շմակովի հաղորդած լուրերը կեղծ էին ու մտացածին, յաճախ իրարամերժ եւ իրենց վայր ի վերոյ, շինծու բնոյթով որեւէ հեռաւոր առնչութիւն չունէին բանաստեղծի գործունէութեան հետ: Շմակովի հաղորդումները թուամանեանը ներկայանում էր Դաշնակցութեան եւ գիւղական կոմիտէների միջնորդ, որին Դաշնակցական կուսակցութիւնը դատի է տուել ինչ-որ գումարներ վատնելու համար: Զեկուցագրերում վատնելու համար: Զեկուցագրերում նշուում էր նաեւ, որ բանաստեղծը Իսահակեանի հետ միասին ահաբեկչական խմբի անդամ է, Քոլագերան կայարանում սպանել է երեք թուրքի եւ այլն: Եւ քանի որ լրտեսները չէին կարող շրջանցել ռուս պաշտօնեաների հետ թուամանեանի սերտ կապերը հարեւրական յարաբերութիւնները, հարկադրուած էին այդ իրողութեանը տալ սեփական մեկնաբանութիւնները: Ռուս պաշտօնեաների, յատկապէս՝ գաւառապետի ու նրա օգնականի անթաքոյց բարեացակամ վերաբերմունքը հայերի նկատմամբ բացատրուում է նրանց կաշառուածութեամբ: Ընդ որում, «կաշառողը» եղել էր անձամբ թուամանեանը՝ իբր Դաշնակցութիւնից նրանց փոխանցելով 10.000 ռուբլի:

1906 թ. մայիսի 18-ի զեկուցագրում Շմակովը բանաստեղծին ներկայացնում էր այսպէս. «Լոռու շրջանում նա կարծես «գեներալ-գուբերնատոր է», նրան է ենթարկուում ամբողջ ղեկավարութիւնը եւ ոստիկանութիւնը»¹¹:

Շմակովը թուամանեանին բնորոշում էր իբրեւ անսահմանափակ իշխանութիւն ունեցող մի գործիչ, որը, ոստիկանութեանը իրեն ենթարկելով, «շրջում է գիւղերում,

10 ԹԹ, ՓԲ, 56:
11 ԹԹ, ՓԲ, 51:

դատ ու դատաստան տեսնում, տուգանում գիւղերը... մինչեւ 500 ռ.»¹²:

Բանաստեղծին ներկայացնում էր եւս մի արտառոց ու անհեթեթ մեղադրանք. իբր թուամանեանը սպանել է «խեղճ անտառապահին՝ կողոպտելու նպատակով»: Այդ մասին յիշատակուում է Վ. Զոլոտարէտովին ուղղուած թուամանեանի պաշտօնական նամակում՝ գրուած 1906 թ. մայիսին. «Իհարկէ ծիծաղելի է, գրում է թուամանեանը, բայց տեսնում էք դրա հետ միանեանը, բայց տեսնում էք դրա հետ միասին որքան ստորութիւն կայ, եւ ինչպէս մարդիկ, որոնց ես ատել եմ, բայց որոնց, մարդիկ, երբեք չարիք չեմ հասցրել եւ ինչ էլ լինի, երբեք չարիք չեմ հասցրել եւ դա թոյլ էլ չեմ տուել, ինչպէս ասում եմ ես: Յովհաննէս թուամանեանը սպանել է անտառապահին - մի կողմ թողնենք, որ թուամանեանն այդ ժամանակ Լոռուայ գաւառում չի էլ եղել: Բայց, այնուամենաւանդ ասում չի էլ եղել: Բայց, այնուամենայնիւ, ինչպէս նրանք ասում են, գուցէ սպանուածի դժբախտ հօրը մոլորութեան մէջ են գցել: Իհարկէ, նա ինձ չի ճանաչում» (10, 448):

Շմակովի՝ անտառապահի սպանութեան մասին 1906 թ. մայիսի 18-ի ամբաստանագիրը անմիջապէս յայտնուում էր ոստիկանապետի ուղարկութեան կենտրոնում եւ, հաւանաբար, նոյն պահին էլ արուում էր թուամանեանին ձերբակալելու կարգադրութիւնը: Մայիսի վերջերին թուամանեանը արդէն տեղեակ էր թէ՛ իր հասցէին եղած մեղադրանքներին եւ թէ՛ իրեն ձերբակալելու մասին ոստիկանապետ, կովկասի փոխարքայի ոստիկանական գործերի գծով սօցնական Շիրինկինի կարգադրութեանը: Այսպէս, հայ-թուրքական ընդհարումների եւ թուամանեանի գործունէութեան ամենաեռուն շրջանում անգամ թշնամական տարրերը դաւեր էին նիւթում նրա դէմ եւ տանդարմական վարչութիւնից նշանադրուած գործակալների միջոցով, եւ կուած յատուկ գործակալների միջոցով,

12 Նոյն տեղում:

Շահաբազի ցուցմունքներին, մէկ առ մէկ հերքել զրանք եւ նրան հռչակել «անագ-նիւ մարդ, եղբայրասպան», ի վերջոյ՝ հոգեկան հիւանդ, որը տառապում է հետապնդման մանիայով: Բանաստեղծը նոյնպէս Շահաբազի վկայութիւնը որակում էր որպէս աննորմալ մարդու մտացածին անհեթեթութիւն:

Վերջին վկան, որը դատարանում խօսեց Թումանեանի մասին, Աշխէնի ամուսնու եղբայրն էր՝ Թիֆլիսի քաղաքագլուխ, մասնագիտութեամբ իրաւաբան Ալեքսանդր Խատիսեանը: Թէեւ նա բարեկամական կապեր ունէր Թումանեանի ընտանիքի հետ, սակայն նրան չէին կարող արգելել ցուցմունք տալ, քանի որ նրա ճառը եւ հարցաքննութիւնը վերաբերում էր ոչ միայն Թումանեանին, այլեւ «Դաշնակցական գործին» ամբողջութեամբ: Հաւանաբար, նրա ելոյթը եղել է փետրուարի 4-ին կամ աւելի ուշ, քանի որ նոյն օրը Թումանեանը, վերադառնալով բանտախուց, գրել է. «Հէնց էս րոպէին եմ եկել Սենատից ու իմ գործն է, այժմ մնաց կիսատ» (10, 138): Սա նշանակում է, որ փետրուարի 4-ից յետոյ էլ, յունուարի 23-ին սկսուած Թումանեանի գործի հետ կապուած իրաւական գործողութիւնները շարունակուել են: Ալ. Խատիսեանը՝ Հայաստանի առաջին Հանրապետութեան ապագայ վարչապետը, երբեք ժամ շարունակ այնպիսի համոզիչ ու փաստարկուած ճառ է ասել, որ նիստերի արանքում եղած ընդմիջումների ընթացքում հիացմունքի խօսքերի հետ միասին ոռւս փաստաբանները ցանկութիւն են յայտնել. «...ահա այսպիսի քաղաքագլուխ էր պէտք Պետերբուրգին»²⁴:

24 Տե՛ս Լ. Հախուերդեան, Թումանեանը եւ ժամանակը, Երեւան, 1995, էջ 33: Աշխէնի յուշերում այդ խօսքերը չկան: Գրականագէտը, հաւանաբար, մէքերումը կատարել է ընտանիքի հետ ունեցած իր գրոյցներից:

Խատիսեանը այնքան լաւ է ներկայացնում Թումանեանին՝ իբրեւ քնարերգու, անուանի բանաստեղծ, որ դատարանի նախագահ Կրիւցովի մէջ հետաքրքրութիւն է առաջանում Թումանեանի արուեստի նկատմամբ, եւ նա պահանջում է իրեն յանձնել Թումանեանի երկերի ժողովածուն: Խատիսեանը վկայում է նաեւ, որ երբ Թիֆլիսին վտանգ էր սպառնում Բորչալուի շրջանի թուրքերից, Թիֆլիսի քաղաքային իշխանութիւններն են խնդրել Թումանեանին՝ օգնութեան գալ իրենց եւ առաջարկել են «իբրեւ այդ շրջաններին ծանօթ անձնաւորութեան՝ խաղաղեցնել ժողովրդին, մի գործ, որ նա կատարեց փայլուն կերպով» (ԹԺՀ, 642):

Մի քանի օր յետոյ դատարանի նախագահ Կրիւցովը Թումանեանի 1903 թ. ժողովածոն մեկնում է դատախազին եւ ասում, որ ինքը ծանօթացաւ մեղադրեալ Թումանեանի գրուածքներին եւ հակապետական ոչինչ չգտաւ:

Վկաների հարցաքննութիւնների աւարտից յետոյ սովորաբար մեղադրեալները տալիս էին բացատրութիւններ: Բացի Աշխէնի շարադրած մի քանի նախադասութիւնից՝ Թումանեանի այդ ելոյթի տեքստը չի պահպանուել: Սակայն դժուար է, համարելով նամակներում եւ Բանտի օրագրում կատարած նշումները, դրանց հիման վրայ կռահել այդ խօսքի բովանդակութիւնը գրեթէ բառացի: Անշուշտ, բանաստեղծը խօսել է համարձակ ու վստահ թէ՛ դատարանում, թէ՛ հարցաքննութիւնների ընթացքում հետեւեալ բովանդակութեամբ. «Եթէ կայ օրէնք ու հնար, ես ձեզ դատի եմ կանչում եւ ասում եմ, որ դուք պաշտպանում էք շանտաժիստներին, մարդասպաններին ու գողերին ու շարժում էք նրանց խօսքերով. նրանք էն ժամանակ զբաղուած էին շանտաժով ու մարդասպանութեամբ, իսկ այսօր, երբ տեսնում են, ժամանակները փոխուել են, զբաղուած են

դանոսներով ու շպիտութիւնով եւ վրէժ են առնում, որովհետեւ իր ժամանակին ես հալածել եմ նրանց: Այժմ դուք ոյժ էք տալի ու պաշտպանում էք նրանց. թէ ցոյց չտամ ու չապացուցեմ, պատասխանատու եմ իմ կեանքով: Իսկ եթէ նրանց իմ դէմ տուած փաստերից թէկուզ ամենափոքրը կ'ապացուցուի, այն ժամանակ բոլորը, ինչ որ գրել են, ընդունեմ ինձ վրայ: Բաց աւէք, թող բաց եւ պարզ լինի» (10, 155):

Իր ելոյթում Թումանեանը վկայակոչել է «Բողոքի դէմ» յօդուածը՝ ապացուցելու է համար իր ոռւսամէտ դիրքորոշումը նոյն հիսկ քաղաքական հալածանքների օրերին: Անշուշտ, յիշեցրել է նաեւ Ֆրանսիական ընկերութեանը պատկանող Շահալի-Էլիար պղնձի գործարանի տնօրէն Կաբալից եւ պարսից դեսպան Արնուդ-Կանանից ստացած գրաւոր շնորհակալութեան մասին, որին նա արժանացել էր արեւնահեղ ընդհանրութեանը դադարեցնելու համար:

Հաւանաբար, Թումանեանը իր ելոյթում յիշեցրել է նաեւ, որ այդ պայքարն իր համար «Ֆեդերացիայի կամ հանրապետութեան խնդիր չէր, այլ հարազատ ժողովրդի եւ հայրենիքի կեանքի խնդիր» (8, 328): Գուցէ շեշտել է նաեւ, որ չէր կարող գրասեղանի մօտ հանգիստ նստել, երբ հայրենիքից գալիս էին «տագնապալի լուրեր» (8, 327):

«Բայց նորից ու նորից սպանութիւնների մէջ, հրդեհների մէջ զբաղուած էի խաղաղութեան ու հաշտեցման գործով եւ կատարում էի ոչ թէ կռուակցական մարդու գործ, եւ նոյնիսկ ոչ թէ հայի, այլ դու գործ, եւ նոյնիսկ ժամանակաանկարգութիւնների ամբողջ ժամանակամիջոցին ես բռնել էի իմ ձեռքում, երբեք բաց չեմ թողել ո՛չ Ղարախաչի հրդեհի առջեւ, ո՛չ այն ժամանակ, երբ յարձակուում էին, ո՛չ նոյնիսկ այն սարսափելի դիշերը, երբ թաթարները շրջապատել էին Շուլաւերը, որտեղ գտնուում էին կինս եւ

երեխաներս, եւ ուզում էին մորթել» (8, 332): Այս խօսքերը բանաստեղծը գրել է Բանտի օրագրում, որպէսզի օգտագործէր իր բանաւոր ելոյթի ընթացքում: Դատարանում Թումանեանն իր խօսքը աւարտում է իրեն այնքան բնորոշ լաւատեսութեամբ՝ դրսեւորելով արդար մարդու հոգեւ եւ խղճի խաղաղութիւնն ու հանգիստը. «Ես գտնուում եմ բանտում, բայց լաւ գիտակցելով իմ անմեղութիւնը, շատ հանգիստ եմ: Հանգիստ քնում եմ՝ համոզուած, որ արդարութիւնը կը յաղթանակի, եւ ինձ կ'արդարացնեն» (ԹԺՀ, 643):

Թումանեանը այս խօսքերն ուղղում է բոլորին՝ թէ՛ ատեանի դատաւորներին ու մեղադրող դատախազին, թէ՛ բոլոր մեղադրեալներին ու վկաններին, եւ թէ՛ հարազատ երեխաներին՝ Մուշեղին ու Աշխէնին, որոնց ամէն անգամ դատարանում նին, որոնց ամէն անգամ դատարանում բարձր ճաղերի ետեւից տեսնելիս նմանեցբարձր էր բնից գլուխները հանած թուշունում էր բնից գլուխները հանած թուշուններ: Թումանեանին ուժ էր տալիս նաեւ այն, որ նա համընդհանուր մեծ համակայն, որ նա համընդհանուր մեծ համակայն էր զգում թէ՛ իր, թէ՛ իր գործունէութեանը հրդեհների կեանքի խնդիր» (8, 328): Գուցէ շեշտել է նաեւ, որ չէր կարող գրասեղանի մօտ հանգիստ նստել, երբ հայրենիքից գալիս էին «տագնապալի լուրեր» (8, 327):

«Բայց նորից ու նորից սպանութիւնների մէջ, հրդեհների մէջ զբաղուած էի խաղաղութեան ու հաշտեցման գործով եւ կատարում էի ոչ թէ կռուակցական մարդու գործ, եւ նոյնիսկ ժամանակաանկարգութիւնների ամբողջ ժամանակամիջոցին ես բռնել էի իմ ձեռքում, երբեք բաց չեմ թողել ո՛չ Ղարախաչի հրդեհի առջեւ, ո՛չ այն ժամանակ, երբ յարձակուում էին, ո՛չ նոյնիսկ այն սարսափելի դիշերը, երբ թաթարները շրջապատել էին Շուլաւերը, որտեղ գտնուում էին կինս եւ

տը չէր լքում նրան. «էսպէս է աշխարհքի բանը - լաւութիւնն էլ է պատժուած - էն էլ աւելի շատ: Բան չկայ. ամէն բանին վերջ կայ. իսկ արդարութիւնը եւ անմեղութիւնը միշտ յաղթանակել են աշխարհքում ու պիտի յաղթանակեն, եւ ես չեմ էլ նեղանում, որ էդ շուտ չի լինում» (10, 139):

Բանտից դուրս գալուց յետոյ էլ մարդկային ապերախտութիւնը, «լաւութիւնը պատժելը» բանաստեղծին առնուազն տարօրինակ էր թւում. «Տարօրինակն այն էր,- գրում է Թումանեանը,- որ իմ դէմ վկայութիւն էին տուել մի հայ, որը իր կեանքով միայն ինձ է պարտական, եւ մի քանի թուրքեր, որոնց հետ թէ ինչքան եմ լաւ վարուել՝ իրենք են աղաղակում այժմ, եւ աշխարհքը գիտի» (10, 147):

Միակ գեղարուեստական ստեղծագործութիւնը, որ Թումանեանը գրեց Պետերբուրգի բանտում, «Երկու հոգի» բանաստեղծութիւնն էր՝ նուիրուած դատապաշտպան Օսկար Գրուզենբերգին: Ամէն անգամ բանտախցում Թումանեանին տեսնելիս Գրուզենբերգը մեծ յուզումներ է ունեցել: Նրան անհանգստացնում էր Թումանեանի հանգստութիւնը, դատական գործի նկատմամբ թուացեալ անտարբերութիւնը: Թուացեալ, որովհետեւ, ինչպէս վկայում է բանաստեղծի աւագ դուստրը՝ Աշխէնը, «...չի կարելի ասել, թէ հայրիկը չէր հետաքրքրուում իր գործով: Նա շատ լաւ գիտէր բոլորը, գիտէր բոլոր վկաներին, ե՛լ լաւերին, ե՛լ վատերին» (ԹԺՂ, 639): Նոյնն են հաւաստում նաեւ բանտախցի առանձնութեան մէջ արուած բանաստեղծի նշումները, վկաների ցուցմունքների շուրջ նրա խոհերը, Շահբազ Շահուերդովի իւրաքանչիւր խօսքը հերքելու համար բերուած փաստարկները, իր անմեղութեան ապացոյցների կցկտուր եւ դատարանում իր ելոյթը նախապատրաստող ազգեցիկ խօսքի շարադրանքը:

Իբրեւ դատապաշտպան քաջ ծանօթ լինելով ամբողջ մեղադրական գործին, դատական ատենանի եւ դատախազի՝ հայ մտաւորականութեանը պատժելու վճռական տրամադրութիւններին՝ Գրուզենբերգը պարզապէս խուճապի էր մատնուած՝ հանդիպելով Թումանեանի հանդարտ ու խաղաղ բնավորութեանը, որն ընկալում էր որպէս անտարբերութիւն: Նա բանաստեղծի դատերը անվերջ դժգոհում էր իր պաշտպանեալից. «...Ես յուսահատուած եմ. ձեր հօր գործը շատ է լուրջ, մեղադրանքը՝ ծանր, իսկ նա չի ուզում հասկանալ, գնում եմ մօտը՝ գործի հետ ծանօթանալու, իրեն նախապատրաստելու... իսկ նա՝ ոչ մի ուշադրութիւն, շատ հմուտ կերպով խօսքը դարձնում է գրական ու փիլիսոփայական հարցերի շուրջ, եւ ցաւալին այն է, որ նրան յաջողում է ինձ գրաւել այդ նիւթերով: Երկու ժամ մօտը մնալուց յետոյ դուրս եմ գալիս փողոց եւ նոր եմ սթափուում ու հասկանում, որ ըստ էութեան գործի վերաբերեալ իրենից ոչինչ չիմացայ» (ԹԺՂ, 639):

Նոյն տպաւորութեամբ բանտից հեռանում էր նաեւ Գրուզենբերգի օգնականը՝ Զերախովիչը, որի հետ 1912 թ. յունուարի 3-ի հանդիպումից յետոյ Թումանեանը գրել է. «Զերախովիչը, մի համակրելի երիտասարդ, աւելի շատ հետաքրքրուեց իմ բանաստեղծութիւններով, քան թէ իմ գործով» (10, 533):

Սակայն Թումանեանը, իրօք, ունեցել է մի ներքին համոզմունք, որ ճշմարտութիւնը յաղթելու է, եւ իրեն արդարացնելու են: Նրա հոգեկան անդորրի ու խաղաղութեան մասին վկայութիւնների հանդիպում ենք բանաստեղծի՝ բանտից գրած գրեթէ բոլոր նամակներում. «Տրամադրութիւնս հանգիստ է եւ խաղաղ: Ոչ մի անհանգստութիւն» (10, 138): Դեռ բանտից գրած առաջին՝ յունուարի 4-ի նամակում, բանաստեղծը հարազատներին վստահեցնում

էր. «Իմ գործը կը պարզուի: Էդ հին պատմութիւն է եւ կրկնուած է: Դուք հանգիստ եղէք» (10, 534): Նոյնը հաւաստիացնում է յունուարի 25-ին, երբ գաւակներին գրում է. «Ես համոզուած եմ, որ շուտով կը տեսնուենք, եւ չեմ կասկածում» (10, 538):

Նոյն թուի փետրուարի 29-ին բանաստեղծը գրում է. «Տրամադրութիւնս, զիտէք, որ հեշտ չի կարող փչանալ, եւ նոյնպէս լաւ է ու խաղաղ» (10, 141):

Որքան էլ՝ հոգով խաղաղ, այնուամենայնիւ, Թումանեանը տանջարանում էր, եւ ինչպէս իւրաքանչիւր կալանաւորի, նրա ուրախութեան պահերը կապում էին միայն ազատութեան երազանքի հետ. «Ես միտում խաղաղ էի,- գրում է նա,- եւ ուրբանտում խաղաղ էի,- գրում է նա,- եւ ունենում էի շատ ուրախութեան վայրկեաններ՝ երազելով դուրսը» (10, 153):

Թերեւս, հոգեկան այդ հանգստութիւնն էր պատճառը, որ կալանաւոր Թումանեանը բանտում կարողացաւ չյուսահատուել ու չխեղճանալ: Նա նոյն համարձակ ու սկզբունքային անձնավորութիւնն էր: Անմեղութեան եւ արդար լինելու զգացողութիւնից ծնունդ այդ համարձակութիւնն ու քաջութիւնը բանաստեղծի անկողնում կամքի ու լաւատեսութեան աւելումն էին: Անմեղ լինելով, դատապարկուած լինելու դրաման ապրելով հանտուած լինելու դրաման գրում է. «Ես ունէի այն, ինչ որ ամէնից էականն է - հոգու լիակատար հանգստութիւն, միշտ եւ անվերջ վստահութիւն ու համարձակութիւն, վերջ վստահութիւն ու համարձակութիւն, որ ոչ երբ գործ ունէի հետները: Ես գիտէի, որ ոչ մի յանցանքի բնավորութիւն ունեցող մի հանգամանք, թէկուզ ամենաչնչին, չեն հանգամանք, թէկուզ ամենաչնչին, չեն կարող դէմս բերել. այնինչ ես նրանց առկարող դէմս բերել. այնինչ ես նրանց առկարող թողնուած էր իր խղճին ու իր համար թողնուած էր իր խղճին ու իր համարձակ կարողակացողութեանը... Ես համարձակ կարողանում էի ասել ամէն բան, ինչ որ չի կարող

ասել մեղաւոր մարդը կամ չպէտք է ասի» (10, 154, 155):

Այդ վստահութիւնը ունէր նաեւ պատմահոգեբանական ազդակներ: Այն պատմահոգեբանական ազդակները աշխարհաբխում էր ինչպէս բանաստեղծի աշխարհայեացքային մօտեցումներից, համոզուած ռուսական կողմնորոշումից, այնպէս էլ բնավորութեան լաւատեսութիւնից, դժուարութիւնները յաղթահարելու անկողնում կամքից եւ, որ, թերեւս, ամենակարեւորն է, ապագան կանխագալու նրա ունակութիւնից եւ երազներին տուած նշանակութիւնից: Թումանեանը օժտուած է եղել թեւեւ յաղթանակով: Նախագագայել է ոչ թեան զգացումով: Նախագագայել է ոչ միայն իր եւ մերձակորների կեանքի դէպքերը, այլեւ հայ ժողովրդի կեանքում տեղի ունեցող պատմական իրադարձութիւնները: Նա գիտէր, որ այդ յատկութիւնը ժառանգել էր իր ծնողներից, յատկապէս մօրից. «Իմ հէրն ու մէրն էլ նախագագայում էին, պայծառատեսութեան ու երազի զարմանալի ընդունակութիւն ունէին...»

Իսկ մէրս մինչեւ օրս էլ ինձ զարմացնում է իր նախագագայութեամբ ու իր երազներով» (8, 430):

Տէր Թադեւոսի ընտանիքում, թերեւս, ամէնից շատ անդրանիկ որդին՝ Յովհաննէսն էր ժառանգել դէպքերը նախագալու այդ յատկութիւնը: «Երազը իմ կեանքում» գրառման մէջ Թումանեանը վկայում է. «Ձեմ սխալուելի, եթէ ասեմ՝ իմ կեանքում մի որեւէ դէպք չի պատահած, որ առաջուց մի որեւէ դէպք չի պատահած չլինեմ: Նախագագայած ու նախատեսած էլ որ առաջագագայած ու նախատեսած էլ որ առաջագագայած եմ ոչ միայն արթուն ժամանակ, այլեւ քնած ժամանակ, երազում, մայրաբանօրէն, պատկերներով, խորհրդանշաններով» (8, 429):

Պետերբուրգի բանտում հոգեկան ներքին խաղաղութիւնն ու հանգստութիւնը, արդար լինելու եւ արդարացուելու

մանկական եւ այլ երգեր: Հնչում է ջութակ, թաւջութակ, կամերային եռեակի կատարումներ: Բացի հայերէն, ռուսերէն եւ ֆրանսերէն նոտանաւորների արտասանութիւնից, երեխաները ներկայացնում են մի փոքրիկ պիես: Թումանեանի մտերիմներից բժիշկ Արտաշէս Բուզադեանը կազմակերպել էր մարմնամարզական համարներ, որոնց յաջորդում է «Շունն ու կատուն» ներկայացումը: Բանաստեղծը յիշում է. «Մի երեխայ առաջ եկաւ, իրեն նման պատրիկ մի ճառ ասաւ ինձ ու ծաղիկներ տուեց, իհարկէ, ես էլ համբոյրներով ընդունեցի... Ներկայացրին «Շունն ու կատուն», յետոյ շարքով մի խումբ երեխաներ եկան ինձ - համբուրուեցինք ծափերի տակ» (10, 144):

Ինչպէս վկայում է Մուշեղը. «Վերջը երեխաներն ու մեծերը ուղացիաներ արին, ու երեխաները (մասնակցողները) մօտեցան հայրիկին ի օրհնութիւն» (32, 98):

Թումանեանը այցելում է նկարիչ Վարդգէս Սուրէնեանցին, լեզուաբան Նիկողայոս Մառին եւ նորանոր ծրագրեր կազմում Հայկազեան ընկերութիւն կազմակերպելու մասին: Լինում է նաեւ Պետերբուրգի բուսաբանական այգում, շրջում քաղաքում, փաստաբան Վոլկենշտէյնի հրաւէրով հիւրընկալում է նրան, որի բնակարանը բանաստեղծին յիշեցնում է «հազուադիւտ իրերի մի թանգարան» (ԹԺՀ, 646): Այնտեղ ծանօթանում է այդ պահին փաստաբանի, ապագայում գրող Ալեքսէյ Տոլստոյի կնոջ՝ բանաստեղծուհի Սոֆիա Տոլստայայի հետ: Այնտեղ թումանեանին մի ոտանաւորով ողջունում է բանաստեղծուհի Շչեպկինա-Վուպերնիկը, որին անմիջապէս բանաստեղծը պատասխանում է հայերէն էքսպրոմտով, եւ որը սեղանակիցները անմիջապէս թարգմանում են:

Թումանեանը հրաւէր է ստանում նաեւ Պետերբուրգի կոնսերուատորիայից,

ուր Անոյշաւան Տէր-Ղեւոնդեանը տեղի հայկական ուժերով կազմակերպել էր մի ցերեկոյթ թումանեանի պատուին: Ծրագրում դարձեալ տեղ էին գտել թումանեանի ստեղծագործութիւնները:

Թումանեանը հիւրընկալում է նաեւ փաստաբան Նիկողայ Դմիտրիւսի Սոկոլովի տանը, որն, ինչպէս վկայում է Աշխէնը, «առանձին քնքշութեամբ էր վերաբերում հայրիկին» (ԹԺՀ, 646): Սոկոլովի տանը թումանեանը շրջապատուած էր ժամանակի յայտնի նկարիչներով: Ներկայ էին Բրոդսկին, Լանսերեն, Կաւոսը, Լիւբիմովը, Վարդգէս Սուրէնեանցը: Ն. Գ. Սոկոլովը թումանեանին ծանօթացնում է գրող Վլադիմիր Կորոլենկոյի հետ, որը բանաստեղծին ուղեկցում է մինչեւ նրա տուն: Աշխէնը պատմում է, որ Սոկոլովը «հայրիկին թողել է Կորոլենկոյի տանը, եւ ինքը գնացել է Երկար զրուցել էին երկուսով: Հայրիկը շատ դուժ էր: Հրածեղտ տալիս, Կորոլենկոն դուրս է գալիս հայրիկին մի քիչ ուղեկցելու: Յետոյ էլ հակառակն է եղել: Այսպէս Նեւսկի պողոտայով միմեանց ճանապարհ են գրել մինչեւ ուշ գիշեր» (ԹԺՀ, 647): Երկու գրողների զրոյցի թեման, ինչ խօսք, եղել է գրականութիւնը, մասնաւորապէս՝ Պուշկինը: Թումանեանը հիացմունքով էր խօսել «Ձմեռուայ իրիկունը» բանաստեղծութեան մասին, ասել էր, որ գերադասում է այն նոյնիսկ «Եւգենի Օնեգինից», ինչը սկզբում զարմացրել էր Կորոլենկոյին, սակայն յետոյ համաձայնուել էր: «Մի պահ կանգնում են փողոցում, - շարունակում է Աշխէնը, - Կորոլենկոն ձեռնափայտը խփում է գետնին եւ ասում. «Գիտէ՞ք, դուք իրաւացի էք»» (ԹԺՀ, 647):

Պետերբուրգի հայկական գաղութը թումանեանի պատուին ընթրիք է կազմակերպում, իսկ ապրիլի 7-ի ուշ երեկոյեան բանաստեղծը մասնակցում է մի հաւաքի, որի նպատակն էր ստեղծել հայոց պատ-

մութեան եւ գրականութեան հիմնադրամ: Այդ նպատակով ընտրուած է յանձնաժողով, որի կազմում էին Ն. Մառը, Ն. Ադոնցը, Ա. Ղուկասեանը, Ս. Տիգրանեանը, Վ. Վարդանեանը եւ ուրիշներ: Այդ ֆոնդը հիմնելու նախաձեռնութիւնը պէտք է վերագրել նաեւ թումանեանին: Նա Պետերբուրգի նախնական կալանատնից ազատելուց երկու օր յետոյ գրում է «Հայոց պատմութիւն» յօդուածը, որը «Հորիզոնում» տպագրւում է ապրիլի 7-ին⁴⁶:

Բանտից դուրս գալուց յետոյ թումանեանը աւելի էր կարեւորում ազգային պատմութեան նշանակութիւնը: Նա համոզուած էր, որ պատմութեան փաստերին զուած էր, որ պատմութեան փաստերին չտիրապետելը վնասակար է, քանի որ միայն գիտական հիմքերի վրայ դրուած եւ անաչառ շարադրուած պատմութիւնը կ'օգնէր իշխող ազգերին աւելի լաւ տարբերել թշնամուն բարեկամից, իսկ սեփական ժողովրդին ու նրա առաջնորդներին՝ հեռու մնալ փորձանքներից: 146-ի դատաւարութիւնը ստիպել էր բանաստեղծին «աղաղակել», թէ «հայ ժողովուրդը չունի եւ չգիտէ իր պատմութիւնը, նոյնիսկ երէկ մէկէլ օրուայ պատմութիւնը. չգիտի, թէ ո՞վ է ինքը, որտեղից է գալիս եւ ո՞ւր գնում: Հոգեկան ու մտաւոր կուրութեան մէջ այս տեսակ ժողովուրդը անուղեցոյց խարխափում է» (6, 355): Խորենացիական հարցադրմամբ իր պատմութիւնը չի մացող եւ նրանից դասեր չառնող ժողովրդին թումանեանը անուանում է «անգիտակից մի խալիս», որը միշտ ենթակայ է փորձերի ու փորձանքների:

Ապրիլի 7-ի շաբաթ օրուայ Պետերբուրգի հայ մտաւորականներից թումանեանի հրաւիրած խորհրդակցութեան մասին վկայում է Մուշեղը, որն իր մայրիկին

գրում է. «Իսկապէս, հայրիկը էստեղ մեծ գործի վրայ է. սրանք էսօր պիտի դուրս գային դէպի ձեզ, բայց որովհետեւ շաբաթօրը ժողով նշանակեցին հայրիկի առաջարկութեամբ, այդ պատճառով էլ մնացին» (32, 97):

Որպէսզի Պետերբուրգում կատարուած «ողբալի գրութիւնը» այլեւս չկրկնուէր, թումանեանը առաջարկում է «Մի «Հայոց պատմութիւն» պէտք է տալ այս ժողովրդին, որ նրան դատողը կարոյ ղանայ ծանօթանալ ու այնպէս դատել, որ նրան պաշտպանողը պաշտպանելիս առաջ քաշի այդ պատմութիւնը եւ այնպէս պաշտպանի, որ նա ինքը, պատասխանի կանչուելիս բաց անի այդ պատմութիւնն ու այնտեղից հանի իր պատասխանը, որ ուրիշներն էլ ճանաչեն նրան, ինքն էլ ճանաչի իրեն» (6, 356):

Ապրիլի 11-ի «Հորիզոնի» առաջնորդը, մեծ յոյսեր կապելով «Հայոց պատմութեան ֆոնդի» կազմակերպման հետ, բանաստեղծի յօդուածի առաջադրած հիմնահարցերի մասին գրում է հետեւեալը. «Դա մի սրտաբուխ հառաչանք էր մեր ժողովրդի վերաբերմամբ, որ ցաւով ու կսկիծով պատմութիւն է ստեղծել, բայց միանձու պատմութիւն է պատմութեանը...»⁴⁷:

Պետերբուրգում անցկացրած օրերից թումանեանը մեծ բաւականութիւն է ստանում, եւ գուցէ աւելի երկար մնար, եթէ չլինէր Մոսկուայից Ալ. Մատուրեանից թէ չլինէր Մոսկուայից Ալ. Մատուրեանից թէ չլինէր Մոսկուայից Ալ. Մատուրեանից կուսայի գրական խմբակցութեան անունից

46 Տե՛ս «Հորիզոն», 1912, թիւ 71, ապրիլի 7: Պատմութեան ֆոնդ ստեղծելու համար ընտրուած տեղում, ապրիլի 10, թիւ 72:

47 «Հորիզոն», 1912, թիւ 73, ապրիլի 11: Հայոց պատմական եւ հնագիտական ընկերութիւնը ստեղծելու թղթաբանութեամբ մասնակցում էր համայնի 29-ին: Ընկերութեան նպատակն էր հաւաքել եւ ուսումնասիրել հայոց պատմութեան եւ հնագիտութեան վերաբերեալ տարբեր բնոյթի փոթոր: Բացումը տեղի է ունեցել 1914 թ. մարտի 29-ին:

